ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 26/03/2019թ թիվ 12-Լ որոշմամբ
Փոփոխված է
28/04/2020թ թիվ 11-Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
« » _____ 2020թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ – 202~~019~~

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են Բյուրոյի և Ապահովագրողների միջև Օրենքի և ԱՊՊԱ ընդհանուր պայմանների համաձայն վճարված ապահովագրական հատուցումներով պայմանավորված փոխադարձ հաշվարկների (այսուհետ՝ փոխհաշվարկ) իրականացման կարգը, ժամկետները և վեճերի լուծման կարգը:

2. Սույն կանոններով Ապահովագրողի՝ ներառյալ ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի համար սահմանված դրույթները տարածվում են նաև Բյուրոյի վրա:

ԳԼՈՒԽ 2
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված նշանակությունը: ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով չնախատեսված հետևյալ հասկացությունները սույն կանոններում օգտագործվում են հետևյալ իմաստով՝

1) **Փոխհաշվարկի ենթակա դեպք**՝ դեպք, որի ժամանակ սկիզբ է առնում ՀՊԱ-ի պարտավորությունը փոխհատուցելու ԴՍԱ-ին,

2) **Փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցում**՝ ԴՍԱ-ի կողմից տվյալ հատուցման գծով տուժողին փաստացի վճարված 0-ից բարձր ապահովագրական հատուցման գումար,

3) **Փոխհաշվարկի հետ կապված պահանջ՝** փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցման հիման վրա սույն կանոններով նախատեսված կարգով հաշվարկված գումար, որի չափով ԴՍԱ-ն տվյալ հատուցման գծով պահանջ է ձեռքբերում ՀՊԱ-ի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 3
ՓՈԽՀԱՇՎԱՐԿԻ ԵՆԹԱԿԱ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՇՎԱՐԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Սույն կանոնների համաձայն ԴՍԱ-ն ՀՊԱ-ի նկատմամբ պահանջի իրավունք է ձեռքբերում հետևյալ բոլոր պայմանների (բացառությամբ 4-րդ ենթակետի) միաժամանակյա առկայության դեպքում՝ ամենավերջում ապահովված պայմանի ապահովման ամսվա փոխհաշվարկների գործընթացում (փոխհաշվարկի ենթակա դեպքեր).

1) ԴՍԱ-ն ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով ՀՊԱ-ի անունից կամ համապարտության կարգով տուժողին կամ նրա իրավահաջորդին փաստացի հատուցել է տուժողին պատճառված վնասները, և հատուցման գումարը տուժողին փաստացի վճարված լինելու մասին տեղեկատվությունը պատշաճ արտացոլված է Միասնական տեղեկատվական համակարգում,

2) ԴՍԱ-ն սույն կանոններով սահմանված պահանջների պահպանմամբ է ներկայացրել իր պահանջը ՀՊԱ-ին,

3) ներկայացված պահանջի հետ կապված՝ ՀՊԱ-ն սույն կանոններով սահմանված ժամկետներում և հիմքերով չի ներկայացրել իր անհամաձայնությունը կամ

ներկայացնելուց հետո սույն կանոնների համաձայն պահանջը համաձայնեցվել է՝ ներառյալ Բյուրոյի կողմից տրված պարզաբանման միջոցով,

4) առկա չեն փոխհաշվարկի ճշգրտման՝ սույն կանոններով սահմանված հիմքերը:

5. Սույն կանոններով ՀՊԱ-ի նկատմամբ ԴՍԱ-ի՝ փոխհաշվարկի հետ կապված պահանջի չափը յուրաքանչյուր հատուցման գծով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Բանաձևը	**Բանաձևում կատարված նշանակումները**	**Նշանակումների բացատրությունը**	
ՓՊ = ՓՎ/Մ$_{ք}$*Մ$_{ՀՊԱ}$* 1.03	ՓՊ	Փոխհաշվարկի հետ կապված ՀՊԱ-ի նկատմամբ պահանջի չափն է՝ տվյալ հատուցման գծով	
	ՓՎ	Գույքին պատճառ-ված վնասների դեպքում	Փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցման չափն է՝ վերահաշվարկված սույն կանոնների հավելված 1-ով նախատեսված միջինացման մեթոդաբանությամբ: Ընդ որում, փոխադարձ հաշվարկներում միևնույն ապահովագրական պատահարի հետ կապված միևնույն տուժողի միևնույն գույքին պատճառված վնասի հատուցման գծով վճարված հատուցման գումարը կարող է մասնակցել մեկ անգամ՝ առաջին անգամ միանվագ մեկանգամյա վճարման չափով՝ անկախ հետագայում դատական ակտի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հիման վրա կամ այլ ցանկացած հիմքով լրացուցիչ վճարում

			կատարելու հանգամանքից, բացառությամբ այն լրացուցիչ վճարումներից, որոնք կատարվել են դատական ակտի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ վնաս պատճառողի մեղավորության աստիճանը փոփոխվելու հիմքով, որի դեպքում փոխհաշվարկի հետ կապված պահանջը ենթակա է ճշգրտման՝ սույն կանոններով սահմանված կարգով:
		Անձնական վնասների դեպքում	Փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցման չափն է
	$Մ_{ք}$	Տուժողին պատճառված վնասում տուժողից բացի մեղավոր անձանց քանակն է, պատահարում տուժողից բացի մեղավոր անձանց բացակայության դեպքում (եթե դա հատուցման մերժման հիմք չի հանդիսանում)՝ պատահարում ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների քանակը	
	$Մ_{ՀՊԱ}$	ՀՊԱ-ի կողմից կնքված և պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագրում նշված և պատահարում ներգրավված այն ավտոտրանսպորտային միջոցների քանակն է, որոնց վարորդները մեղավոր են ճանաչվել տուժողին պատճառված վնասում, իսկ պատահարում տուժողից բացի մեղավոր անձանց բացակայության դեպքում (եթե դա հատուցման	

		մերժման հիմք չի հանդիսանում)՝ ՀՊԱ-ի կողմից կնքված և պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագրում նշված և պատահարում ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների քանակը
	1.03	Գործակից է, որը նախատեսված է ԴՍԱ-ի կողմից տուժողին հատուցված գումարի 3%-ի չափով ԴՍԱ-ի գործավարման ծախսերի փոխհատուցման նպատակով

ԳԼՈՒԽ 4

ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

6. Փոխհաշվարկների գործընթացի փուլերն են՝

1) **Փոխհաշվարկի հետ կապված պահանջի ներկայացում.** փոխհաշվարկի հետ կապված պահանջի ներկայացում է համարվում ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ փաթեթի ծանուցումը ԴՍԱ-ից ՀՊԱ-ին, ընդ որում, միևնույն հատուցման գործընթացում մեկից ավելի անգամ փաթեթ ծանուցվելու դեպքում փոխհաշվարկի հետ կապված պահանջի ներկայացում է համարվում տվյալ ՀՊԱ-ի կողմից ստացված վերջին ծանուցումը,

2) **Փոխհաշվարկի հետ կապված պահանջի համաձայնեցում.** այս փուլում սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջն ստացած ՀՊԱ-ները ներկայացնում են փոխհաշվարկի հետ կապված պահանջի վերաբերյալ իրենց համաձայնությունները կամ անհամաձայնությունները, ինչպես նաև առկա անհամաձայնությունների վերաբերյալ Բյուրոյի կողմից տրվում են պարզաբանումներ՝ սույն կանոնների Հավելված 2-ի Հոսքագիր 1-ով նախատեսված կարգով, ժամկետներում և հարցերի շրջանակներում,

3) **Փոխհաշվարկի ակտի ստացում.** յուրաքանչյուր ամսվա համար փոխհաշվարկի ակտերը (համաձայն Հավելված 3.1-ի) ինքնաշխատ ձևավորվում են ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում՝ սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ համաձայնեցված փոխհաշվարկի հետ կապված պահանջների հիման վրա և յուրաքանչյուր Ապահովագրողի համար իր մասով հասանելի է լինում ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում տվյալ ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրվանից: Սույն ենթակետի համաձայն ձևավորված փոխադարձ հաշվարկի ակտերն ինքնաշխատ համարվում են հաստատված ակտի կողմերի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ Ապահովագրողի մոտ առկա են համապատասխան հիմքեր կամ կասկածներ առ այն, որ ակտում արտացոլված տեղեկատվությունը չի համապատասխանում սույն կանոններով նախատեսված կարգով ներկայացված փոխհաշվարկի հետ կապված պահանջների ամփոփ պատկերին կամ

տեխնիկական պատճառներով ճիշտ չի արտացոլում ամբողջական արդյունքը: Նման դեպքերում համապատասխան ուսումնասիրությունները և պարզաբանումները տրամադրվում են Բյուրոյի կողմից եռօրյա ժամկետում՝ Միասնական տեղեկատվական համակարգը սպասարկող կազմակերպության կողմից ստացված պարզաբանումների հիման վրա,

4) **Փոխհաշվարկի վճարում.** այս փուլում սույն կետի 3-րդ ենթակետի համաձայն ստացված փոխադարձ հաշվարկների ակտերի հիման վրա համապատասխան գումարները համապատասխան կողմերի կողմից վճարվում են մինչև այդ ակտերի ստացման ամսվա 10-րդ աշխատանքային օրը,

5) **Փոխհաշվարկի հետ կապված պահանջի ճշգրտում.** փոխհաշվարկի գործընթացում նախկինում ներառված և փոխհաշվարկի ակտում արտացոլված փոխհաշվարկի հետ կապված պահանջները կարող են ճշգրտվել սույն կանոնների Հավելված 2-ի Հոսքագիր 2-ով նախատեսված կարգով և ժամկետներում տվյալ փոխհաշվարկի ակտին կից ճշգրտման ակտ (Բյուրոյի գործադիր տնօրենի հրամանով սահմանված ձևով) կազմելու միջոցով՝ հետևյալ դեպքերում՝

ա. Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտով փոփոխվել է տվյալ պատահարում մեղավոր անձանց շրջանակը կամ նրանց մեղավորության աստիճանը,

բ. օրինական ուժի մեջ է մտել դատական ակտ, որով հաստատված հանգամանքները հիմք են ԱՊՊԱ ընդհանուր պայմանների համաձայն հատուցում վճարելու վերաբերյալ դիմումը մերժելու կամ հատուցման գումարը նվազեցնելու համար,

գ. օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է, որ ՀՊԱ է հանդիսանում այլ անձ,

դ. օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների կողմից հաստատվել է, որ փոխադարձ հաշվարկների համար ներկայացված գործերում առկա են կեղծ տեղեկություններ, որոնք հիմք են նախկինում կայացված՝ ապահովագրական հատուցումը վճարելու (մասնակի վճարելու, մերժելու) որոշումները վերանայելու համար,

ե. փոխհաշվարկի ակտում ներառված փոխհաշվարկի հետ կապված պահանջը ենթակա է ճշգրտման օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

6) **Ճշգրտման ակտով ՀՊԱ-ի կողմից ԴՍԱ-ին գումարի վճարում (վերադարձում).** այս փուլում սույն կետի 5-րդ ենթակետի համաձայն ստացված ճշգրտման ակտերի հիման վրա համապատասխան գումարները համապատասխան կողմերի կողմից վճարվում (վերադարձվում) են այդ ակտերի ստացման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում.

7) **Փոխհաշվարկների տարեկան զրոյացում Բյուրոյի և ԴՍԱ-ների միջև.** այս փուլը կիրառելի է բացառապես այն փոխհաշվարկների գծով, որոնցում որպես ՀՊԱ հանդես է եկել Բյուրոն: Յուրաքանչյուր տարվա ընթացքում Բյուրոյի անունից վճարված հատուցումների գումարների և փոխհաշվարկների ակտերի հիման վրա Բյուրոյի կողմից որպես ՀՊԱ վճարված գումարների (չհաշված գործավարման ծախսերի փոխհատուցման մասը) միջև առաջացած դրական կամ բացասական տարբերությունները համամասնորեն բաշխվում են Ապահովագրողների միջև տվյալ տարվա արդյունքներով հաշվեգրված ապահովագրավճարներում վերջինների ունեցած մասնաբաժիններին համապատասխան: Փոխհաշվարկների տարեկան զրոյացման ակտերը կազմվում և Բյուրոյի կողմից Ապահովագրողներին են փոխանցվում տվյալ տարվա վերջին ամսվա փոխհաշվարկի իրականացումից հետո՝ 10 աշխատանքային

օրերի ընթացքում: Փոխհաշվարկի տարեկան զրոյացման արդյունքում վճարման ենթակա գումարները փոխհաշվարկների դրական տարբերության դեպքում՝ Բյուրոյի կողմից Ապահովագրողներին, իսկ փոխհաշվարկի բացասական տարբերության դեպքում՝ Ապահովագրողների կողմից Բյուրոյին են վճարվում սույն կետով սահմանված փոխհաշվարկների տարեկան զրոյացման ակտերը Բյուրոյի կողմից Ապահովագրողներին փոխանցելուց հետո՝ 5 աշխատանքային օրերի ընթացքում: *(լրաց. է 28/04/2020թ թիվ 11-Լ)*

7. Ապահովագրողները փոխհաշվարկների գործընթացում իրավունք չունեն սույն կանոններով չսահմանված և (կամ) սույն կանոններով չնախատեսված ժամկետներում որևէ գործողություններ իրականացնել: Այդպիսի գործողությունները փոխհաշվարկների գործընթացում որևէ հետևանքներ չեն առաջացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխհաշվարկի որևէ գործընթացի ճշգրտում իրականացվում է փոխհաշվարկի բոլոր կողմերի համաձայնությամբ:

8. Փոխհաշվարկի ենթակա դեպքով ԴՍԱ-ն կրում է Օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված կարգով՝ ապահովագրական հատուցումը պատշաճ վճարելու հետ կապված պահանջների և ընթացակարգերի պահպանման և սույն կանոններով սահմանված պահանջների պահպանման համար պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ 5
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ, ՏՈՒՅԺԵՐԸ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

9. Ապահովագրողների միջև փոխհաշվարկների գործընթացում տեղ գտած անհամաձայնությունները լուծվում են սույն կանոնների 6-րդ կետի 2)~~2~~-րդ ենթակետում նկարագրված փոխհաշվարկի փուլում՝ Հավելված 2-ում նկարագրված կարգով և ժամկետում՝ Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից տրամադրված պարզաբանող եզրակացության հիման վրա: Ընդ որում՝ Բյուրոյի գործադիր տնօրենի պարզաբանող եզրակացությունն Ապահովագրողների համար համարվում է վերջնական հիմք համապատասխան փոխհաշվարկի իրականացման համար:

10. Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից տրված պարզաբանող եզրակացության՝ դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում սույն կանոններով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան փոխհաշվարկների իրականացումը:

11. Սույն կանոններով նախատեսված վճարման ժամկետները կետանցելու դեպքում ՀՊԱ-ն պարտավոր է ԴՍԱ-ի պահանջով վերջինին վճարել տույժեր յուրաքանչյուր կետանցված օրվա համար փոխադարձ հաշվարկների ակտով նախատեսված վճարման ենթակա գումարի 1 տոկոսի չափով:

Հավելված 1
«Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի և վերջինիս անդամ ապահովագրական ընկերությունների միջև ապահովագրական հատուցումների գծով փոխադարձ հաշվարկների իրականացման» կանոնների

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՄԻՋԻՆԱՑՄԱՆ

1. Բյուրոն Ապահովագրողների միջև փոխհաշվարկի հետ կապված պահանջները հաշվարկելու նպատակով ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողների կամ նրանց իրավահաջորդների գույքին պատճառված վնասների գծով փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցումը միջինացնում է հետևյալ ընթացակարգով՝

1) Նախորդ ամսվա ընթացքում բոլոր Ապահովագրողների կողմից գույքին պատճառված վնասների գծով փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցումները մեկ միասնական ցանկում (այսուհետ՝ Ցանկ) դասավորվում և համարակալվում են՝ ըստ աճման կարգի: Միևնույն գումարի հատուցումները դասավորվում են պատահական հերթականությամբ,

2) Սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված կարգով պատահականության սկզբունքով ընտրվում է 1-ից 99 ներառյալ (R) թիվ,

3) R-ի արժեքից կախված՝ սույն կետի 1)-ին ենթակետով սահմանված կարգով դասավորված բոլոր հատուցումները խմբավորվում են հետևյալ 3 կամ 4 խմբերում.

ա. Եթե R ≤ 25 (դեպք 1), ապա հատուցումները բաժանվում են չորս միջակայքի, որտեղ առաջին միջակայքում ընկնում են Ցանկի 1-ից $N_{մին}$–ը ներառյալ տողերում տեղաբաշխված հատուցումների չափերին համարժեք բոլոր հատուցման գումարները, երկրորդ միջակայքում ընկնում են Ցանկի $N_{մին}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը գերազանցող, սակայն $N_{մաքս}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը չգերազանցող բոլոր հատուցման գումարները, երրորդ միջակայքում ընկնում են Ցանկի $N_{մաքս}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը գերազանցող, սակայն $N_{ամբողջ}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը չգերազանցող բոլոր հատուցման գումարները, և չորրորդ միջակայքում ընկնում են Ցանկի $N_{ամբողջ}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը գերազանցող բոլոր հատուցման գումարները (եթե այդպիսիք կան): Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝

$N_{մին}$ = [$N_{ամբողջ}$ x R/100] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{մաքս}$ = [$N_{ամբողջ}$ x (100-R)/100] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{ամբողջ}$ = [$N_{ընհանուր}$ x(0.96+(0.04 x R/100)] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{ընդհանուր}$ - ը հատուցումների ընդհանուր քանակն է,

բ. Եթե 26 ≤ R ≤ 75 (դեպք 2), ապա հատուցումները բաժանվում են երեք միջակայքի, որտեղ առաջին միջակայքում ընկնում են Ցանկի 1-ից $N_{միջ}$–ը ներառյալ տողերում տեղաբաշխված հատուցումների չափերին համարժեք բոլոր հատուցման գումարները, երկրորդ միջակայքում ընկնում են Ցանկի $N_{միջ}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը գերազանցող, սակայն $N_{ամբողջ}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը չգերազանցող բոլոր հատուցման գումարները և երրորդ միջակայքում ընկնում են Ցանկի $N_{ամբողջ}$ տողում տեղաբաշխված հատուցման չափը գերազանցող բոլոր

հատուցման գումարները (եթե այդպիսիք կան): Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝

$N_{միջ}$ = [$N_{ամբողջ}$ x R/100] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{ամբողջ}$ = [$N_{ընհանուր}$ x (0.96+(0.04 x R/100)] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{ընդհանուր}$ - ը հատուցումների ընդհանուր քանակն է,

գ. Եթե 76 ≤ R ≤ 99 (դեպք 3), ապա հատուցումները բաժանվում են չորս միջակայքի սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կարգով՝ տարբերությամբ, որ $N_{մին}$-ը և $N_{մաքս}$-ը հաշվարկվում են հետևյալ բանաձևերի հիման վրա՝

$N_{մին}$ = [$N_{ամբողջ}$ x (100-R)/100] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը),

$N_{մաքս}$ = [$N_{ամբողջ}$ x R/100] (վերցվում է ստացված թվի ամբողջ մասը):

4) Համապատասխան միջակայքերն ընտրելուց հետո Ցանկի յուրաքանչյուր միջակայքի համար հաշվարկվում է տվյալ միջակայքի՝ փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցման միջին չափը (միջակայքի միջին)՝ միջակայքում ընդգրկված՝ փոխհաշվարկի հիմքում ընկած հատուցումների հանրագումարը բաժանելով դրանց թվաքանակի վրա,

5) սույն կետի համաձայն հաշվարկված միջակայքի միջինը փոխհաշվարկներում որպես միջին կիրառվում է տվյալ միջակայքում ընդգրկված փոխհաշվարկի հիմքում ընկած բոլոր հատուցումների նկատմամբ:

2. Սույն հավելվածում նշված (R) պատահական թիվն ընտրվում է սույն կանոնների փոխհաշվարկի ամսվան հաջորդող ամսվա չորրորդ աշխատանքային օրը՝ ժամը 17:00-ին՝ Բյուրոյի գրասենյակում www.random.org ինտերնետային կայքի միջոցով պատահականության սկզբունքով ստացվող 1-ից 99 ներառյալ միջակայքի թվերից: Նշված գործողությունն իրականացվում է Բյուրոյի գործադիր տնօրենի (կամ գործադիր տնօրենի կողմից լիազորված Բյուրոյի այլ ներկայացուցչի) և, ցանկության դեպքում, Ապահովագրողների ներկայացուցիչների մասնակցությամբ (ներկայությամբ), ընդ որում Ապահովագրողների ոչ մի ներկայացուցչի չներկայանալու դեպքում նշված գործողությանը պարտադիր մասնակցում են Բյուրոյի նվազագույնը 3 աշխատակիցներ: Թվի ընտրության ավարտից հետո ընտրված թիվն ու ընտրության ամսաթիվն արտացոլող ինտերնետային էջը տպագրվում և ստորագրվում է ներկաների կողմից: Սույն ենթակետով նախատեսված ինտերնետային կայքի չաշխատելու դեպքում համապատասխան թիվն ընտրվում է ներկաների կողմից որոշված նմանատիպ այլ ինտերնետային կայքի կամ վիճակահանության միջոցով, որի արդյունքները նույնպես արձանագրվում և ստորագրվում են ներկաների կողմից:

Հավելված 2
«Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի և վերջինիս անդամ ապահովագրական ընկերությունների միջև ապահովագրական հատուցումների գծով փոխադարձ հաշվարկների իրականացման» կանոնների

«Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի և
վերջինիս անդամ ապահովագրական ընկերությունների միջև ապահովագրական
հատուցումների գծով փոխադարձ հաշվարկների իրականացման» կանոնների

ՀԱՎԵԼՎԱԾ 3.1. ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ՁԵՎ

ԱԿՏ 2 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՎԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ									
ԴՍԱ՝ Ա ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՊԱ՝ Բ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ									
Ա ընկերության անվանում									
Հաշվետու ժամանակահատված (տարի/ամիս)									
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ									
Խումբ 1. Գույքին պատճառված վնասների գծով հատուցումների փոխհաշվարկների խումբ									
Տվյալ ամսվա համար սահմանված միջակայքեր (ՀՀ դրամ)		Տվյալ միջակայքում ԴՍԱ-ի կողմից ՀՊԱ-ի անունից փաստացի վճարված ապահովա-գրական հատուցումների չափը (ՀՀ դրամ)	Միջակայքի համար սահմանված միջին (ՀՀ դրամ)	Յուրաքանչյուր միջակայքում ԴՍԱ-ի կողմից հատուցումների քանակ					Տվյալ միջակայքի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ՝ հատուցումների գծով (ՀՀ դրամ)
1		2	3	4					5
Առավելագույն գումարի չափ				1 Մ$_{ք}$	2 Մ$_{ք}$	3 Մ$_{ք}$	...	n Մ$_{ք}$	

Ընդամենը բոլոր միջակայքերով									
Պահանջի նկատմամբ հաշվարկված գործավարման ծախսերը (ՀՀ դրամ)									
Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի ընդհանուր պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ (ՀՀ դրամ)									
Խումբ 2. Անձնական վնասների գծով հատուցումների փոխհաշվարկի խումբ	**ԴՍԱ-ի կողմից հատուցված գումար** (ՀՀ դրամ)								**Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ** (ՀՀ դրամ)
	1								**2**
	1 $Մ_p$	**2 $Մ_p$**	**3 $Մ_p$**	**...**	**n $Մ_p$**				
ԸՆԴԱՄԵՆԸ (ԴՍԱ-ի պահանջները ՀՊԱ-ի նկատմամբ)									
ԴՍԱ՝ Բ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՊԱ՝ Ա ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ									
Բ ընկերության անվանում									
Հաշվետու ժամանակահատված (տարի/ամիս)									
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ									
Խումբ 1. Գույքին պատճառված վնասների գծով հատուցումների փոխհաշվարկների խումբ									

Տվյալ ամսվա համար սահմանված միջակայքեր (ՀՀ դրամ)		Տվյալ միջակայքում ԴՍԱ կողմից ՀՊԱ անունից փաստացի վճարված ապահովագրական հատուցումների չափը (ՀՀ դրամ)	Միջակայքի համար սահմանված միջին (ՀՀ դրամ)	Յուրաքանչյուր միջակայքում ԴՍԱ-ի կողմից հատուցումների քանակ					Տվյալ միջակայքի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ՝ հատուցումների գծով (ՀՀ դրամ)
1		2	3	4					5
Առավելագույն գումարի չափ				1 $Մ_ք$	2 $Մ_ք$	3 $Մ_ք$	...	n $Մ_ք$	
Ընդամենը բոլոր միջակայքերով									
Պահանջի նկատմամբ հաշվարկված գործավարման ծախսերը (ՀՀ դրամ)									
Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի ընդհանուր պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ (ՀՀ դրամ)									

Խումբ 2. Անձնական վնասների գծով հատուցման պարտավորությամբ հատուցումների խումբ	ԴՍԱ-ի կողմից հատուցված գումար (ՀՀ դրամ)					Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ (ՀՀ դրամ)
	1					2
	1 $Մ_ք$	2 $Մ_ք$	3 $Մ_ք$	...	n $Մ_ք$	

ԸՆԴԱՄԵՆԸ **(ԴՍԱ-ի պահանջները ՀՊԱ-ի նկատմամբ)**						
ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐ						
Բ ընկերությունը վճարում է Ա ընկերությանը	ՀՀ դրամ					
Ա ընկերությունը վճարում է Բ ընկերությանը	ՀՀ դրամ					

Սույն ակտը կազմված է երկու օրինակից, ակտի կողմ համարվող յուրաքանչյուր ընկերության համար մեկական օրինակով:

Ա ընկերության անունից			**Բ ընկերության անունից**		
(անունը և ազգանունը, պաշտոնը)		(ա.ա.տ.)	(անունը և ազգանունը, պաշտոնը)		(ա.ա.տ.)

ՀԱՎԵԼՎԱԾ 3.2 ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ակտի՝ լրացման ենթակա դաշտի անվանումը	**Տվյալ դաշտում լրացվող տեղեկատվության բովանդակությունը**
Ա ընկերության անվանում	այն ապահովագրողի անվանումը, որը տվյալ ապահովագրական հատուցման գծով հանդիսացել է ԴՍԱ
Հաշվետու ժամանակահատված (տարի/ամիս)	հաշվետու տարին և ամիսը՝ ամիս/տարի ֆորմատով և հաջորդականությամբ
Խումբ 1. Գույքին պատճառված վնասների գծով հատուցումների փոխհաշվարկների խումբ	
Տվյալ ամսվա համար սահմանված միջակայքեր *(ՀՀ դրամ)*	հաշվետու ժամանակահատվածի համար սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված կարգով որոշված գույքային վնասների գծով հատուցումների գումարների միջակայքերի համապատասխանաբար առավելագույն և նվազագույն սահմանները
Տվյալ միջակայքում ԴՍԱ-ի կողմից ՀՊԱ-ի անունից փաստացի վճարված ապահովագրական հատուցումների չափը *(ՀՀ դրամ)*	յուրաքանչյուր միջակայքի շրջանակներում համապատասխան ԴՍԱ-ի (Ա կամ Բ ընկերություն) կողմից հաշվետու ժամանակահատվածում գույքին պատճառված վնասների գծով ՀՊԱ-ի (Բ կամ Ա ընկերություն) անունից փաստացի վճարված հատուցումների չափը
Միջակայքի համար սահմանված միջին *(ՀՀ դրամ)*	հաշվետու ժամանակահատվածի համար համապատասխան միջակայքում ընկնող ապահովագրական հատուցումների համար սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված կարգով որոշված ապահովագրական հատուցման միջինացված գումարը
Յուրաքանչյուր միջակայքում ԴՍԱ-ի կողմից հատուցումների քանակ	յուրաքանչյուր միջակայքի շրջանակներում համապատասխան ԴՍԱ-ի (Ա կամ Բ ընկերություն) կողմից հաշվետու ժամանակահատվածում գույքին պատճառված վնասների գծով

	փաստացի վճարված հատուցումների քանակը՝ ըստ $Մ_ք$-ի, որոնց գծով ԴՍԱ-ն սույն կանոնների համաձայն պահանջի իրավունք է ձեռք բերել ՀՊԱ-ի (Բ կամ Ա ընկերություն) նկատմամբ: Ընդ որում, տվյալ պատահարում մեկից ավելի $Մ_{ՀՊԱ}$ լինելու դեպքում յուրաքանչյուր $Մ_{ՀՊԱ}$-ի գծով հատուցումների հաշվարկը և սույն սյունակում արտացոլումն իրականացվում է առանձին: Ընդ որում, փոխադարձ հաշվարկներում միևնույն ապահովագրական պատահարի հետ կապված միևնույն տուժողի միևնույն գույքին վճարված հատուցման գումարը կարող է մասնակցել մեկ անգամ՝ միանվագ մեկանգամյա վճարման չափով՝ անկախ հետագայում դատական ակտի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հիման վրա կամ այլ հիմքով լրացուցիչ վճարում կատարելու հանգամանքից, բացառությամբ այն լրացուցիչ վճարումներից, որոնք կատարվել են դատական ակտի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ վնաս պատճառողի մեղավորության աստիճանը փոփոխվելու հիմքով:
Տվյալ միջակայքի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ՝ հատուցումների գծով *(ՀՀ դրամ)*	յուրաքանչյուր միջակայքի համար ԴՍԱ-ի ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է տվյալ միջակայքի համար սահմանված միջինը այդ միջակայքում ԴՍԱ-ի կողմից հատուցումների քանակներով բազմապատկելու և համապատասխան $Մ_ք$–ների քանակի վրա բաժանելու միջոցով
Ընդամենը բոլոր միջակայքերով	2-րդ սյունակում լրացվում է ԴՍԱ-ի (Ա կամ Բ ընկերություն) կողմից հաշվետու ժամանակահատվածում գույքին պատճառված վնասների գծով ՀՊԱ-ի (Բ կամ Ա ընկերություն) անունից փաստացի վճարված բոլոր

	հատուցումների չափը, որը հաշվարկվում է բոլոր միջակայքերում նշված՝ տվյալ ընկերության կողմից մյուս ընկերության անունից փաստացի վճարված ապահովագրական հատուցումների չափերն իրար գումարելու միջոցով
	5-րդ սյունակում լրացվում է գույքին պատճառված վնասների գծով հատուցումների վճարման հիման վրա ԴՍԱ-ի մոտ առաջացած ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է բոլոր միջակայքերում նշված՝ հատուցումների գծով մյուս ընկերության նկատմամբ տվյալ ընկերության պահանջի չափերն իրար գումարելու միջոցով
Պահանջի նկատմամբ հաշվարկված գործավարման ծախսերը *(<< դրամ)*	գույքին պատճառված վնասների հատուցման կարգավորման նպատակով կատարված գործավարման ծախսերի գծով ԴՍԱ-ի մոտ առաջացած ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է տվյալ խմբի համար «Ընդամենը բոլոր միջակայքերով» տողի 5-րդ սյունակում լրացված թիվը 0,03 գործակցով բազմապատկելու միջոցով
Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի ընդհանուր պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ *(<< դրամ)*	գույքին պատճառված վնասների հատուցման գծով ԴՍԱ-ի մոտ առաջացած ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է տվյալ խմբի համար «Ընդամենը բոլոր միջակայքերով» տողի 5-րդ սյունակում և «Պահանջի նկատմամբ հաշվարկված գործավարման ծախսերը» տողում լրացված թվերի գումարման միջոցով
Խումբ 2. Անձնական վնասների գծով հատուցումների փոխհաշվարկի խումբ	
ԴՍԱ-ի կողմից հատուցված գումար *(<< դրամ)*	համապատասխան ԴՍԱ-ի (Ա կամ Բ ընկերություն) կողմից հաշվետու ժամանակահատվածում անձնական

	վնասների գծով փաստացի վճարված հատուցումների գումարը՝ ըստ $Մ_ք$-ի, որոնց գծով ԴՍԱ-ն սույն կանոնների համաձայն պահանջի իրավունք է ձեռք բերել ՀՊԱ-ի (Բ կամ Ա ընկերություն) նկատմամբ: Ընդ որում, տվյալ պատահարում մեկից ավելի $Մ_{ՀՊԱ}$ լինելու դեպքում յուրաքանչյուր $Մ_{ՀՊԱ}$-ի գծով հատուցումների հաշվարկը և սույն սյունակում արտացոլումն իրականացվում է առանձին
Տվյալ խմբի համար ԴՍԱ-ի պահանջը ՀՊԱ-ի նկատմամբ *(ՀՀ դրամ)*	անձնական վնասների հատուցման գծով ԴՍԱ-ի մոտ առաջացած ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է ԴՍԱ-ի կողմից հատուցված գումարներն ըստ սյունակների համապատասխան $Մ_ք$–ների քանակի վրա բաժանելու, և արդյունքները իրար գումարելու և 1.03 գործակցով բազմապատկելու միջոցով
ԸՆԴԱՄԵՆԸ (ԴՍԱ-ի պահանջները ՀՊԱ-ի նկատմամբ)	Հաշվետու ժամանակահատվածում բոլոր տեսակի հատուցումների գծով ԴՍԱ-ի մոտ առաջացած ընդհանուր պահանջը համապատասխան ՀՊԱ-ի նկատմամբ, որը հաշվարկվում է բոլոր խմբերի համար հաշվարկված պահանջների գումարները գումարելու միջոցով
ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐ	
Բ ընկերությունը վճարում է Ա ընկերությանը	Առաջին և երկրորդ «ԸՆԴԱՄԵՆԸ (ԴՍԱ-ի պահանջները ՀՊԱ-ի նկատմամբ)» դաշտերում նշված գումարների տարբերությունը
Ա ընկերությունը վճարում է Բ ընկերությանը	Երկրորդ և առաջին «ԸՆԴԱՄԵՆԸ (ԴՍԱ-ի պահանջները ՀՊԱ-ի նկատմամբ)» դաշտերում նշված գումարների տարբերությունը
Ա ընկերության անունից	Ա ընկերության անունից հանդես եկող անձի անունը, ազգանունը,

	ընկերությունում զբաղեցրած պաշտոնը, արտահանման ամսաթիվը, ամիսն ու տարին
Բ ընկերության անունից	Բ ընկերության անունից հանդես եկող անձի անունը, ազգանունը, ընկերությունում զբաղեցրած պաշտոնը, արտահանման ամսաթիվը, ամիսն ու տարին
Ակտում լրացման ենթակա տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ստացվում է ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից:	